

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2019 թ. դպրոցական
օլիմպիադայի առաջին (դպրոցական) փուլի
/տևողությունը – 90 րոպե/

10 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ինչպիսի աշխարհամակարգ է խոտհարքը.

1. բնական 2. բնահասարակական 3. հասարակական 4. տնտեսական

2. Ո՞վ է «Աշխարհացույց» - ի հեղինակը.

1. Դավիթ Անհաղթը 2. Մովսես Խորենացին
3. Գրիգոր Մագիստրոսը 4. Անանիա Շիրակացին

3. Ո՞ր մասշտաբն է ամենափոքրը.

1. 1 : 25 000 000 2. 1 : 2 500 000 3. 1 : 250 000 4. 1 : 25 000

4. Արեգակի խավարում է տեղի ունենում, երբ.

1. Արեգակը Երկրի և Լուսնի միջև է 2. Արեգակը Գալակտիկայի կենտրոնում է
3. Լուսինը Երկրի և Արեգակի միջև է 4. Երկիրը Լուսնի և Արեգակի միջև է

5. Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հասարակածի վրա.

1. սեպտեմբերի 23 – ին և դեկտեմբերի 22 – ին 2. հունիսի 22 – ին և դեկտեմբերի 22 – ին
3. մարտի 21 – ին և հունիսի 22 ին 4. մարտի 21 – ին և սեպտեմբերի 23 – ին

6. Նստվածքային օրգանական ծագման ապար է.

1. տուֆը 2. կավը 3. նավթը 4. ավազը

7. Բնութագրումով որոշել կլիմայական գոտին.

Այս գոտում միշտ տաք է, բնորոշ են տաք ու չոր օդային զանգվածները: Տեղումները հազվադեպ են և քիչ: Ո՞ր կլիմայական գոտին է.

1. արևադարձային 2. մերձարևադարձային 3. բարեխառն 4. մերձհասարակածային

8. Ծնելիության և մահացության տարբերությունը կոչվում է.

1. բնակչության վերարտադրություն 2. բնակչության մեխանիկական աճ
3. բնակչության բնական աճ 4. բնակչության միգրացիա (գաղթ)

9. Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.

1. էներգետիկական 2. մետաղաձուլությունը
3. թեթև արդյունաբերությունը 4. մեքենաշինությունը

10. «Պետություն – մայրաքաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

1. Սյանմա – Բիշքեք 2. Ուզբեկստան – Քաբուլ
3. Մոնղոլիա – Ուլան Բատոր 4. Նեպալ – Վիենսյան

11. **Բնական գազի պաշարներով հարուստ երկրներն են.**
1. Եգիպտոսը և Չադը
 2. Ալժիրը և Լիբիան
 3. Մադագասկարը և Անգոլան
 4. Եթովպիան և Նիգերիան
12. **Տրված ջրամբարները ո՞րն է ամենախոշորը.**
1. Ազատի
 2. Ապարանի
 3. Կեչուտի
 4. Ախուրյանի
13. **ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**
1. բազմաճյուղ է
 2. ունի էքստենսիվ բնույթ
 3. հողային ֆոնդը մոտ 3 մլն հա է
 4. առաջատար ճյուղն անասնապահությունն է
14. **Սյունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**
1. Վայոց ձորի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով
 2. Իրանի հետ սահմանն անցնում է Ողջի գետով
 3. Հարավ – արևմուտքում սահմանակից է Թուրքիային
 4. Հարավում սահմանակից է Ադրբեջանին:
15. **Մթնոլորտի աղտոտման մարդածին աղբյուրներն են.**
1. ապարների քայքայումը
 2. արդյունաբերությունը
 3. հրաբխի ժայթքումը
 4. փոշեմրրիկները

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քաղաքը գտնվում է արևելյան երկայնության 45° – ի վրա: Լոնդոնից այն քան՞ի ժամվա տարբերություն ունի:
17. Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. $30^{\circ} 30'$, արմ. ե. 60° : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը հունիսի 22 – ին:
18. Գետի լայնությունը 10 մ է, միջին խորությունը՝ 0,6 մ, իսկ ջրի արագությունը՝ 2 մ /վ : Որոշել գետի հոսքը 1 րոպեում (մ³):
19. Երկրի բնակչության թիվը 6 մլն է, իսկ մեկ տարում ծնվածների թիվը՝ 90 000 մարդ: Հաշվել ծնելիության գործակիցը (‰) :
20. Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 840 000 ցենտներ, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 24 000 հեկտար: Որոշել բրնձի միջին բերքատվությունը (ց / հա) :